ACCU-CHEK® Active

Roche

# Սկսեք այստեղից

## Օգտագործման համառոտ ձեռնարկ

ACCU-CHEK®

## ⚠ ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Նոր և օգտագործված մարտկոցները հեռու պահեք երեխաներից: Լրացուցիչ տեղեկությունների համար տես Օգտագործողի ձեռնարկը:

- Այս Օգտագործման համառոտ ձեռնարկը չի փոխարինում ամբողջական Օգտագործողի ձեռնարկին, որը տրամադրվում է Accu-Chek Active չափող սարքի և Accu-Chek Softclix մաշկը ծակող սարքի հետ: Անպայման հետևեք Օգտագործողի ձեռնարկում բերված անվտանգության տեղեկություններին: Կարդացեք փաթեթի ներդիրը, որը տրվում է թեստի շերտերի հետ:
- **Accu-Chek Softclix մաշկը ծակող սարքը նախատեսված է միայն անհատական օգտագործման համար:** Սարքը չի կարելի օգտագործել **մեկից** ավելի անձանցից արյուն վերցնելու համար: Առկա է վարակների փոխանցման ռիսկ, եթե մաշկը ծակելու սարքն օգտագործվի այլ մարդկանց, նույնիսկ ընտանիքի անդամների կողմից, կամ եթե բուժաշխատողներն այս մաշկը ծակելու սարքն օգտագործեն մեկից ավելի անձանցից արյուն վերցնելու համար: Այդ պատճառով մաշկը ծակելու սարքը նպատակահարմար չէ բուժհաստատություններում կամ բուժիհմնարկներում օգտագործման համար:
- Արյան մեջ գլյուկոզի մակարդակը չափող սարքի մասնագիտական օգտագործման համար պետք է հետևեք բուժաշխատողների համար նախատեսված տեղեկություններին (տե՛ս չափող սարքի Օգտագործողի ձեռնարկի «Մեկից ավելի հիվանդների մոտ ստուգումը» բաժինը):

## Ընդհանուր ակնարկ. Չափող սարք և թեստի շերտեր




1 Էկրան
2 Կոճակներ
3 Թեստի շերտերի ուղղորդիչ
4 Թեստի շերտ

Ծանոթացեք արյան մեջ գլյուկոզայի մակարդակը Accu-Chek Active չափող սարքին:
Կարդացեք փաթեթի ներդիրը, որը տրվում է թեստի շերտերի հետ:

## Մաշկը ծակող սարքը նախապատրաստելը

1

Ծանոթացեք Accu-Chek Softclix մաշկը ծակող սարքին:

2



Հանեք ծայրապանակը մաշկը ծակող սարքի միջից:

3



Նշտարի բռնիչի մեջ տեղադրեք նոր նշտար:
Նշտարը պետք է լսելի չխկոցով ընկնի իր տեղը:

4



Պաշտպանիչ ծայրապանակը պտտող շարժումով հանեք նշտարի վրայից:

5



Ծայրապանակը նորից տեղադրեք մաշկը ծակող սարքի վրա: Ծայրապանակը պետք է լսելի չխկոցով ընկնի իր տեղը:

6




Պտտեք ծայրապանակը, մինչև դրվի ցանկալի թափանցման խորությունը: Սկսեք թափանցման փոքր խորությունից, օրինակ՝ 2-րդից:

## ⚠ ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Արյուն վերցնելիս միշտ օգտագործեք նոր նշտար: Այդպես վարվելով դուք կնվազեցեք վարակի ռիսկը, իսկ արյուն վերցնելը դառնում է գրեթե ցավազերծ:

ⓘ

Եթե ձեր Accu-Chek Active չափող սարքի կամ Accu-Chek Softclix մաշկը ծակելու սարքի օգտագործման հետ կապված լրացուցիչ օգնության կարիք ունեք, դիմեք հաճախորդների աջակցման ծառայություն:

Վերջին թարմացում՝ 2020-01

CE 0123

ACCU-CHEK և SOFTCLIX ապրանքանշանները Roche ընկերության ապրանքանշաններ են:

© 2020 Roche Diabetes Care

Roche Diabetes Care GmbH
Sandhofer Strasse 116
68305 Mannheim, Germany
www.accu-chek.com

09071369001(03)

PDF eckerts3 - Jul 27, 2020
Approved according to SOP 04.07.08 – Anl. A, Vers. 03
Kat. 03
The Signature will not be printed!
GD/LAY eckerts3 - Jul 27, 2020
PM/LAB obermans - Jul 28, 2020
LAN ziliania - Jul 28, 2020

## Արյան մեջ գլյուկոզի մակարդակը չափելը

**1**

Ձեռքերը լվացեք տաք ջրով և օճառով:
Արյուն վերցնելուց առաջ ձեռքերը չորացրեք:

**2**

Թեստի շերտերի տարայից թեստի մի շերտ հանեք:
Կափարիչն ամուր փակեք:

**3**




Առանց թեքելու՝ թեստի շերտը սլաքների ուղղությամբ տեղադրեք թեստի շերտի ուղղորդիչի մեջ:

**4**



Պատրաստ վիճակի բերելու կոճակը սեղմեք այնքան, որքան կսեղմվի: Մաշկը ծակող սարքը բերված է պատրաստ վիճակի, երբ ձգանի կոճակի կենտրոնը դեղին է:

**5**



Մաշկը ծակող սարքը ամուր սեղմեք մատի ծայրի կողմնային հատվածի վրա ընտրված ծակվածքի տեղին: Սեղմեք դեղին ձգանի կոճակը:

**6**

Երբ էկրանին հայտնվում է թարթող կաթիլի նշանը՝ Արյան կաթիլը դրեք թեստային գոտու կենտրոնում:

**7**

Առկայծող ավազի ժամացույցով նշանը ցույց է տալիս, որ թեստն ընթացքի մեջ է:

**8**




Մոտ 5 վայրկյան անց թեստի արդյունքը կհայտնվի էկրանին, և չափող սարքը ձայնային ազդանշան կտա:

## Օգտագործված նշտարները թափելը

**1**

Հանեք ծայրապանակը մաշկը ծակող սարքի միջից:
Արտարկիչը սահեցրեք առաջ:
Օգտագործված նշտարը դուրս է գալիս մաշկը ծակելու սարքի միջից:

**⚠ ԶԳՈՒՇԱՑՈՒՄ**

**Օգտագործված նշտարները թափեք այնպես, որպեսզի ասեղները վնասված չպատճառեն:**

Ծայրապանակը նորից տեղադրեք:

## Սխալի հաղորդագրություն

Եթե որևէ սխալ տեղի ունենա, հետևեք այս ցուցումներին: Անջատեք չափող սարքը:
Իրավիճակից կախված՝ դուք կարող եք անջատել չափող սարքը՝ սեղմելով M կոճակը և S կոճակը միաժամանակ, կամ թեստի շերտը հանելով չափող սարքի միջից:

E-1 Թեստի շերտը բռնեք այնպես, որ դրա վրա տպված սլաքները և թեստային գոտին նայեն դեպի վեր:
Առանց թեքելու՝ թեստի շերտը սլաքների ուղղությամբ տեղադրեք թեստի շերտի ուղղորդիչի մեջ: Դուք պետք է զգաք, որ թեստի շերտն ընկնում է իր տեղը:
ԿԱՄ
Կրկնեք արյան մեջ գլյուկոզայի մակարդակի ստուգումը կամ ստուգիչ թեստը՝ նոր թեստի շերտով:
ԿԱՄ
Մաքրեք չափման պատուհանը:

E-2 Կրկնեք արյան մեջ գլյուկոզայի մակարդակի ստուգումը կամ ստուգիչ թեստը՝ նոր թեստի շերտով:

E-4 Հանեք USB մալուխը և կրկնեք արյան մեջ գլյուկոզի մակարդակի ստուգումը կամ ստուգիչ թեստը՝ նոր թեստի շերտով:

E-5 Փոխեք ձեր դիրքը կամ անջատեք էլեկտրամագնիսական ճառագայթման աղբյուրը:

E-5 Գնացեք ստվերոտ տեղ կամ ստվեր ապահովեք արյան մեջ գլյուկոզայի մակարդակը չափող սարքի վրա, օրինակ՝ ձեր մարմնով:

EEE Կրկնեք արյան մեջ գլյուկոզայի մակարդակի ստուգումը կամ ստուգիչ թեստը՝ նոր թեստի շերտով: Եթե սխալի հաղորդագրությունը կրկին հայտնվի, նշանակում է չափող սարքը թերություն ունի: Դիմեք հաճախորդների աջակցման ծառայություն:

ttt Ապահովեք, որ շրջակա միջավայրի ջերմաստիճանը լինի +8-ից +42°C և սպասեք, որպեսզի չափող սարքը հարմարվի այդ ջերմաստիճանին: